

20 Փարս

Նամակ կամ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
ԱՌ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Ծ Ա Ղ Ի Կ Շարաքարերի
Կ. Պոլիս, Էսկի Չափի թիւ 61
Ն.ՇԱԿՆ Ե. ՊԵՏԻՊԵՐՆԻՍԵՆԻ տպարանը
درعيله اسكى ضبطه سوقاغده نومرو 71
(نشان بر بیان مطبعه)

Direction du Journal ZAHIK
Constantinople rue Eski Zaptié No. 61
chez M. NICHAN BERBERIAN



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Գիտական եւ Գրական

20 Փարս

ԲԱՃԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս	Համար տարեկան	20 զրոշ
Գաւառներու	տարեկան	30 »
Օտար երկիրներու	»	8 Ֆրանք

Թղթատարութեան ծախքը Կապիթալ վարութեան
կը պատկանի :

Տնօրէնութեան ուղղուած գրութիւնք ետ չեն
տրուիր :

Ազգիքը կամ բերանացի եւ կամ նամակով կը
կարկուտ :

ԱՐՈՒԵՍԱԿՅԻ ՆԱԽԱՆՁ

Արուեստակութիւնը եղբայրակեցութիւն մ'է. միեւնոյն նպատակի համար աշխատիլ այն տեղ ուր անհատի մը համար յաջողիլ անկարելի պիտի ըլլար, հոն կա դա՛ն կը միանան ուրիշներն եւ այդ աշխատութիւնը ի գլուխ կ'ենին :

Արեւմտեան արուեստագիտութիւնը արուեստակցին նկատմամբ յարգանք մը կը պարտի ի ինչն եւ միոյն բախտը չինելու համար միւսը կործանել չատանապարհելու եւ գոհացիլ ետստիւթիւն մ'է :

Ժողովրդեան ստորին եւ երբեմն միջակ դասակարգերուն մէջ պէտք է փնտռել այդ գոհացիութեան արմատները, սին եւ ամուլ վէճեր, անտեղի հակառակութիւններ, դժուար երկարակներ, պայքարներ, որոնք այնքան կատաղօրէն կը մղուին յաջողութեան չաստուածին սիրտին :

Միտքս կը յաճի այդ ամէն յոյժերու եւ տագնապներու մէջէն եւ սրտանց կը ցաւմ այն մարդոց վրայ որոնք իրենց ստորնացած ետին կոյր երկրպագութիւնն են, եւ եթէ վայրէջեան մը յաջողին իրենց նպատակին մէջ, ի՜նչ դիւային շունչով մը պիտի փչեն կործանուած ուրիշի մը աւերներուն մոխիրը :

Անշուշտ մտրի եւ սրտի կարողութեանց զարգացումը այդ չարիքին առաջը պէտք է առնու. բայց այս մտածումն ալ իր սիւք կը կոյրենցնէ, երբ կը դիտենք թէ զարգացեալ համայնութեան դասերուն մէջ եւս կան նոյն վէճեր, նոյն հակառակութիւններ :

Ենթադրենք, զոր օրինակ, ուսուցիչ մը, որ ժողովրդեան ընտրեալներուն դասին պէտք է համարուի, անոր իւր օրինակելի տիպար մը. բայց սա ծիծաղելի կ'ըլլայ շատ անգամ իր մէկ պաշտօնակցին դէմ ունեցած անտեղի հակառակութիւններով, իր նպատակաւոր խաղերով՝ զանի տապալելու, ցէխէ ցիխ խաւայեցնելու համար : Հոս ու հոն կ'երթայ իւր նոր յայտնութիւններ ընելու այդ պաշտօնակցին ապիկարութեան, անձեռնհասութեան վրայ :

Ով դու, ով կարգեց քեզ համարաւոր ուրիշի թերութեանց վրայ, եթէ իրօք այդ պաշտօնակցի անբաւական մէկն է, մասնաւոր հոլածանք ի՜նչ հարկ, սրովհետեւ այդ պիտի չուտով կը զրկուի իր պաշտօնէն. ուրեմն քու այդքան եւս անդդաւեւորդ է եւ նոյն իսկ այդ նախանձայնութիւն կատարեալ կուտայ անկեղծութեանդ մասին :

Կամ եթէ այդ ողին ունեցող ուսուցիչ մը դպրոցի մը վարիչ ըլլաւու կոչուած է, իր անխոհեմ կարգադրութիւններով կը վշտացնէ պաշտօնակցին իրենց նոյն իսկ ի միաս իր բարեկարգել ուղած դպրոցին :

Եւ մինչ իմ պաշտօնակցներուս այս թերութիւնը մտածանքի կ'ընեմ, կ'ըստի ինձ թէ մեր կրթական դասն ալ իր եղբայրակցներուն նկատմամբ նոյն թերութիւնն ունի. համարաշխութեան ոգին անոնցմէ չատին հա-

մար կը պակսի. եւ նոյն իսկ հակառակութեան չղթայ մը կը միացնէ մեր նուիրապետութեան բաղձալիւ անդամներն :

Նոյնպէս ցաւ ի սիրտ կը տեսնենք բժիշկներ, որոնք բարձրագոյն գիտութիւն տալով ըլլալով պարտէին օրինակ հանգիստնալ մեզ, եւ որոնց նկատմամբ ժողովուրդը ամենէն բարձր դատարարը կազմած է իրաւամբ. ասոնք եւս մեր ընկերական կեանքի այս յուր արտանշինները կը կրեն, իրենց այցելութեանց մէջ արուեստի պահանջներէն մին կը նկատեն պաշտօնակցիներն անարգել, իր թէ այդ այցելութիւններն առիթներ ըլլային նոր համբաւներ չինելու իրենց, ուրիշ սիրելի անուններ աղարտելով : Գուցէ զրգարաւոր, ցաւատանջ հիւանդ մ'է այն, որ կը կողկողի իր անկողնոյն մէջ. ի՜նչպէս յոյս եւ ակումբներ կ'ապանայցնելու բժիշկէն, եւ ի՜նչպէս յամր յամր վերամակին տակէն կը հանէ բազուկը, որպէս զի զննել տայ բազկերակը, ուր կը յայտնուին անոր առողջութեան կամ տկարութեան որոշիչ նշաններն, եւ բժիշկը պիտի հասկնայ թէ ի՜նչպէս հիւանդութիւն մը սահեցուցած է անոր երակներուն մէջ իր թոյնը :

Թերեւս այդ բժիշկը ուրիշ պաշտօնակցի մը յայտնութեան եւ երբ սիրտցաւ եւ գրեթէ արտասուագին հայր մը եւ մայր մը, քոր մը կամ աղբական մը նախորդ բժշկի մը տղած զեղբերուն տրցակը կը տանին կը ներկայացնեն այս նոր բժիշկին. սա իսկոյն կը քննադատէ նախորդը, կը յարձակի անոր համբաւին վրայ, կը պախարակէ անոր գիտութիւնը, լուսանքներ կ'արձակէ իր պաշտօնակցին դէմ, եւ շուրջը գտնուող միասիտ մարդոց ցաւը կը կրկնուպատկի, յուսահատութիւնը կատարեալ կ'ըլլայ, եւ մանաւանդ մասացու ատելութիւն մը կը սնուցուի հիւանդին տէրերուն մէջ այն նախորդին դէմ : Կ'ըստի թէ վաղամուրի Տարթ. Արծուրին այսպիսի հակառակութեան մը զոհ գացած է խապիւղի բարձունքներուն վրայ :

Ախտն ձեռք, ով Հիպոկրատի անյայտակարար սպաներաներ :

Այս առթիւ կը զեկուցանենք թէ ձեռնհասութիւն մը, որ մեր գրականութեան մէջ ալ սիրելի անուն մը ունի, մտադիր է այս սիւնակներուն մէջ բժշկաց պարտակեցում իրենց անոր մասին խօսիլ :

Բայց արդեօք վերոյնշանակեալ թերութիւններն ընդհանուր են հայ ուսուցչին, հայ կրթաւորին եւ հայ բժիշկին համար : Ո՛չ, ո՛չ, այդ բանը մեզ համար անդարմանելի չարիք մը պիտի ըլլար :

Հոս կ'ուզեմ միակողմ մը բռնալ յիշատակութեան մը համար. անդամ մը Աղբ. Պատրիարքարանի մէջ կրթաւորի մը ընթացքի մասին երբ բողոքներ կը բարձրանան կրթական ժողովոյ մէջ նստին, նախագահը բողոքներուն աղբուրթիւնը հակակշռելու համար թերեւս պաշարեամբ մը կ'ընէ. « Եւ արդէն մենք ո՛վ այդ մեր եղբոր թերութիւնները չունին » : Այն ատեն ժողովա-

կան մը ոտք կ'ենին եւ կը դռնէ. « Սըրբազան, Ե՛ս » :

Այդ ետի աղաղակը՝ որ անոր ներքին բարոյական գիտակցութեան աղաղակն է, կրնան արձակել ներկայ պաշարային՝ բաղձալիւ հայ ուսուցիչներ, կրթաւորներ, բժիշկներ : Մենք միայն ոմանց թերութիւնները մտածանք ընելու եւ թերեւս անոնց ուղղութեան յորդոր մը ըլլալու համար գրեցինք այս սուղերը :

ՍՄՏՈՐ ԳԱՐԱՄԱՃԱՆՆ

ՊԱՐՏԱԶԱՆՅ ՇՆՈՂԲ

Բ.

Յաճախ ծնողք են որ ռիսկաւորութեան առաջին սերմերը կը ցանեն իրենց զաւակներուն սրտին մէջ :

Այդ ծնողք որ եւ ձախող դէպքէ զգացած զայրոյթնին, տան մէջ պղտիկներու ներկայութեանը ծածկելու խոհեմութիւնը չ'ունին. եւ որ աւելին է, իրենց բարկութիւնը, արդար կամ անտեղի, ամբարձու մղով, ամենէն պերճախօս բառերը գործածելէ չ'են քաշուիր, պարտաւորեալ համար բացակայի մը իրենց ընթացքը իրենց գէմ :

Եւ որովհետեւ այս բորբոքումները անհիմն են շատ անգամ եւ յարգի բողբ պէս վաղանցուկ, կը պատահի որ քննադատութեան առարկայ եղող անձեր, տան մէջ տեղի ունեցածին անդիտակ, այցելութեան գան եւ մեծարանքով, ընդունուին :

Ի՜նչ կը մտածէ արդեօք տղան այս յայտնի հակառակութեան առջեւ, եթէ ոչ առաջին եւ աղբու դաս մը կ'առնու երկրի մէջ եւ կեղծաւոր կենցաղի. եւ այս անտարակուսելի է :

Երբեմն բարկութեան այս տեսարանները աւելի հիմնաւոր պատճառներէ ծագած կ'ըլլան. եւ խնդրոյն ա'լ աւելի ցաւով կ'ըլլին այն է թէ՛ ատելութեան եւ պղտիկ կոկեղեկութեան աղբուրթը աւելի կամ նուազ մօտաւոր ազգականաց ծոցէն կը իջնին :

Այս բանը հազուադէպ չէ, ընդհակառակը : Գուց իսկ ձեր ծանօթներուն մէջ ունենալու էք այնպիսի եղբայրներ որ իրարու անհաշտ թշնամի ըլլան, բոյրեր՝ որ իրարու երես անգամ տեսնել չուզեն. վերջապէս, եղբորդիներ՝ որ երկար տարիներէ ի վեր իրար չեն բարեւած :

Յարբերութեանց խղճան այս շըրջանին մէջ, խորհեցէք թէ ո՛րքան խօսքեր, բարասանքներ տեղի կ'ունենան այդ գծուած ընտանիքներու մէջ :

Երկու կողմերուն փոքրեք, միշտ ուշադիր մեծերուն խօսքերուն, իրենք ալ իրենց կարգին ատել կը սարմին : Ահա, զաւանթի թշնամութիւն մը կ'ուզայ հաստատուելու իրենց եւ իրենց հասակակիցներուն մէջտեղ, բնական դարձած օրէնքով մը :

Կը զգա՞նք արդեօք ծնողք թէ իրենց այդ առտնին սին կոկեղեկութիւն, ի՜նչ անհոն չարիք կը հասցնեն ընկերութեան : Հաստատել չէ այս. որովհետեւ եթէ զգացած ըլլային, անշուշտ կ'ուզուէին :

Թող որ իրենց զաւակներուն սրտերը լեղիով կը դառնացնեն եւ ռիսկաւ փոքրիկ զաւակները կը դարձնեն զանաք, սա եւս կայ որ մի եւ նոյն գերդաստանի զաւակները իրարու դէմ հանելով, զանոնք իրարմ կը բաժնեն :

Մանկութեան ատեն հակառակորդներ կը տեսնեն հոն, ուր եղբայրներ կային :

Պատանեկութեան շրջանին մէջ եւս, աւելի գծուած սրտերը հաստատուն կրուսաններ կըլլան հակառակութեանց :

Իսկ աշխարհի փոթորիկն մէջ, այդ անխորհուրդ ծնողք, հիմա մէկ մէկ մարդ դարձած եւ գործի գլուխ անցած այդ պղտիկները կը զրկեն անկեղծ եւ արեւնակցութեան կապերով ամրացած բարեկամութիւններէ : Ինչո՞ւ կ'որոշէին մանկութեան այն բարեկամները, որք ցմա՛հ պիտի տեսնէին. եւ ինչո՞ւ իրարու զորավոր չ'ըլլային ձախողութեան վայրէկաններուն :

Եւ եթէ տեսնէք մէկը որ դժբախտութեան անդունդին կ'ընկէ հասած է, եւ իր մօտաւոր ազգականը, հակառակ իր բարեւաւած կացութեան, օգնութեան ձեռք չը կարկտանք անոր, զիտե՛ք որ միշտ ծնողք են յանցաւոր. զի անոնց սերմանած ատելութիւնն է որ ծլած եւ իրենց անկեղծութեան աւելի մեծ համեմատութեանց յանգած է :

Մեղք չէ՞...

ՄԵՏԻՈՐ

ՈՉ-ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

ՄԱՂԱԽԻ « ՊԵՆԵՏԻՈՒՍ » յօդուածին
հնազանդութեանը

— Մտեր ինչո՞ւ չպատասխանէր :
— Կուտիւրեմ տկարութիւն կը նշանակէ :

— Արդէն ի՜նչ կարելի է գրել :
— Ձայնակոյն էին ոչ-եկեղեցականներ հարուածները :

— Մտեր գիտութեան չափը չե՛տուցեալ :
— Ի՜նչպէս :

— Գնահատութեան մարման մը եւ հմտութիւն՝ շատ քիչ :
Եւ մինչդեռ այսպէս մենք կ'առնենք կուտակ մը մէջ հազիւ ուրեմն մի քանի գրքերու ձեռք երկնցուցած ըլլալով, Մտեր հեռուն իր ուսումնասիրութեանց ու խօսմանց մէջ թաղուած, պատկառելի հեղինակութիւններու առջեւ խոնարհած՝ արժէք իսկ չի տար այդ քննադատականութեան եւ չհամար պատասխանել, ըսելով.

1. — Մարդ մը, որ եւսերիտի իրաւայն պատմական վկայութեան դէմ (պէտք է զիստալ որ Պետրոսի գէպիկ մասին եւսերիտ իր տեղեկութիւնները քաղած է Պապիոսի գրուածներէն, ինչպէս ինք կ'ընէ իր եկեղեցական պատմութեան մէջ, Պապիոս՝ աշակերտ Յովհաննու աւետարանչի, մեռած է 130 թուին) : Կարծես ոչ բանաստեղծական ներքուցին վկայութիւն կը բերէ :

2. Մարդ մը, որ Լատինացեայ տոգրերը չէ հասկցած. որովհետեւ Լատինացի իր նոյն ներքուցին մէջ ո՛չ միայն բողոքական այլաբանութիւն կը մեկնէ հոգւոյն այդ շնորհք. այլ եւ լեզուախօսութեան համար յայտնապէս կը գրէ. «... վասն որոյ ամենիմաստ նախ որպիս վաճակուի ի խնջոյ խաղոց՝ զարմանալի փոփոխմամբ շփոթեաց... » զի զայն խաղաղիկ՝ նուաճեալ եւ լեզուախօսութիւնն ի խնջոյն տեսնալով, եւ այլուր լեզուախօսութեան համար կը գրէ. « Մեծ է, սակեւ, արուեստն քննելու, թէ առ ի՜նչ ունի աւարտելու կարեմը նկատելու » :

3. Մարդ մը, որ Շնորհալին իր պաշտպանած դատին ի վկայութիւն կը իջէ, առանց զիստալու թէ Շնորհալի լեզուախօսութեան հրաշքին առթիւ եւ ոչ իսկ մէկ բան գրած է, գոնէ դրամպէս : (Տե՛ս, Հոգեգալստեան երրորդ աւուր կանոնին մէջ. «... այսօր գրածանեալ չէ հասկացած միաբանեաց » :

« զարմեալ ի սուրբ վերնատուն » : Հինգերորդ աւուր կանոնին մէջ՝ « Որ ի հըրեղէն լեզուս բաժանեալ դրանն ընտրութեան լեզուաց շնորհաց սուրբ առաքելոցն » են. են. որոց ամենքն ալ լատինացեայ կանոններն մը չունին :

4. Մարդ մը, որ տակաւին տեղեկութիւն չունի, թէ ի՜նչ է վարդապետութիւնը ըստած բանը քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, որ չգիտէր թէ ո՛չ մէկ ազգի կամ եկեղեցւոյ մէջ վերնատան լեզուախօսութիւնը դատաւորութեան կարգին անցած է :

5. Մարդ մը՝ որ Պոլսոյ Ա. Կորնթ. Ժ. գլուխին հայերէնը հասկնալու չափ մտաւոր կարողութիւնը չունի, կ'արժէ որ անպատասխան լնայ :

Եւ ի՜նչ է այն քննադատութիւններուն նպատակը. գուցէ նորոշեալ արեւելայի մը վարկը կորսելու եւ մանաւանդ ցոյց տալ թէ, ներքին չէ կարծիքներ յայտնել, քննական հայեացքներ նետել կրօնական խնդրոց վրայ : Շատ սահմանափակ մտածում մ'է այդ. լուսաւորութեան մեր գաղափարները, եկեղեցին ու դատաւորութիւնը սիրելի դարձնելու համար : Շարունակ ճշմարիտ պիտի ըլլայ թալմուտի սա խօսքը, թէ « Տգէտ մը հաստատեալ մը չկրնար ըլլալ, այլ միայն կոյր մոլեռանդ մը » :

ԵԿԵՂԵՑԱՍԻՐ

Թ. Գ. Առ ուր անկ է. — « Թարգմանեալ » բայն մէկ լեզուէն միւս լեզուէն փոխել կամ զարմեալ շնչանակեր միշտ, այլ նաեւ կը նշանակէ « մեկնել, խօսիլ, պարզարարել » : Եւ աստի, « Թարգմանութիւն » ալ կը նշանակէ, « մեկնութիւն գրոց, մեկնարանութիւն միջին եւ գաղտնի իրաց, ճառ, վերլուծութիւն » : Օրինակի համար, պէտք է այս խմատով առնուլ ո՛չ միայն Ա. Կորնթ. Ժ. Գ. համարին խնդրոյ նիւթը եղող հատուածը, այլ եւ նոյն թղթոյն (Ժ. 10) « Այլու՛մ՝ բարգաւաճութիւն լեզուաց » :

Դիտեալ պէտք է թէ Բրիտոս, իր Առաքեալներուն ռացարած էր արդէն շնորհոյն գալստեան նպատակը. (ուսուցանել եւ յիշեցնել նախկին բուսածները, բայց ո՛չ լեզու սորվեցնել) : Եւ թէ ամբողջ աւետարաններուն մէջ տեղ մը միայն կայ, ուր գրուած է թէ ով որ Բրիտոսի հաւատայ ու մկրտուի, ի լեզուս խօսելու շնորհքն ալ պիտի տրուի իրեն (Մկ. Ժ. 2. 17) : Բայց ընդհանուր Բրիտոսեայ եկեղեցեաց համար Մարկոսի Ժ. 2. 14-ից 9 համարին մինչեւ վերջ երկուդականութիւն մէջ չգտնուելու պատճառաւ, այն կարծիքը կայ թէ Գործք Առաքելոց խմագրութեան վերջ գրուած հատուած մ'է, Մարկոսէն տարբեր մէկու մը ձեռքով :

ՆՈՅՆ

Դ Ի Պ Ո Ւ Ն Ե Ը

ԱՐԱՐԱՆԱՆ ՀԷՔԵԱԹ

Դեռատի արար բանաստեղծը սիրահարած էր անոր, այդ նորածն իւր քաղցրարար ծաղիկին, որ իր ջքնաղ գեղեցկութեան կը միացնէր անմահ պարկեղծութիւն մը եւ անբախիր վարք մը : Այս երջանիկ զոյգը զիրար կը պաշտէին. իրենց սիրային տեսակցութիւնները խնդիլ ու խնդիլ ճշմարիտ վայրէկաններ էին :

Գիշեր մը, այս սաստիկ սիրոյն հուր-բոլբոլեան, բանաստեղծը դուրսնետ-

